

մանչես. (գիրիս ածէ նմ)՝ ահ, որդեակ իմ, որդեակ իմ, իմ բրուտէ. գու՛ի գիրկս իմ անցունչ ես, բնութիւն քեզ արհաւելիս ածէ ՚ի վերայ, և գորով ոչ մի:

Բր. Ո՛վ ահաւոր և անյօյս բաղդիս. ով երդումն, ահ հայրենիք իմ սիրելի. ով Հռովմ, ով դիք: Կեսար... աւաղ հիգացելումն, աւաղ տառապեալ սրախի. շատ է ինձ այս կեանք իմ, ուր ից մահ:

ԿԵՍ. Խօսեաց Բրուտէ, խօսեաց, որդեակ իմ. Եթերևս խիլճ մտացդ տագնապէ զքեզ. ասա ինձ, բաց զարիս քո. հաւատա հօր քում. լսես դու, իմ Բրուտէ: Բարեւ. (առ խորշ). Երկնչս դու ուրեմն լինել իմ որդի. զարհուրիս ՚ի ցանկալի անուանէ տատի. խորշիս ՚ի սիրոյ իմմէ, գարշնս ՚ի հալորդութենէ փառացս. արիւն իմ քեզ նախատինս թուի. ահ, այս թագ և այս գաւազն, այս արքայութեն և Կեսարդ անուն, յորմէ դուգ գարշի, վասն քո միայն հանդերձեցան, զարքայութեանս ժառանգութիւն ընդ քեզ և ընդ Հոկտաւոս կամէի բաժանել:

Բր. Ո՛վ երկինք, աստուածք...

ԿԵՍ. Կամիս բարբառեւ, ճգնիս, այլ ոչ հանդարտես. եթէ ՚ի սիրոյ իցէ այդ հեծութիւն, եթէ ՚ի սրամանութենէ. զի՞նչ իցէ որ զքեզ տագնապէ. խօսեաց, տուր պատասխանի:

Բր. Կեսարէ...

ԿԵՍ. Որդեակ իմ...

Բր. Ա՛հ, ոչ կարեմ խօսել:

ԿԵՍ. Եւ ընդէր արդեօք, ընդէր ոչ իշխես ձայնել զքաղցր անունս հայր:

Բր. Եթէ հայր իմ ես դու, մի ինչ է զոր խընդրեմ:

ԿԵՍ. Խօսեաց միանգամե զամնայն կատարեմ:

Բր. Սպան զիս աստէն, և կամ՝ ի բաց կաց յարքայութենէդ:

ԿԵՍ. Այ անօրէնց զաւակ. այ ապաշնորհ անգորյն բարբարոս, անողոքելի գազան կատաղի. այ սիրտ ապառաժ խստացեալ և ևս յիմմէ գթութենէ. Երթ այսուհետե, չես դու իմ որդի, Երթ անողորմ քաղաքացի. սիրտ իմ յուսակտուր ուսաւ ինչ յայսմ առ ՚ի քէն. այս սիրտ զոր այդշափ ատեցեր, խզեսէ իբրև զքոյդ զկապ բնութեան, մոռասցի զգութ հայրական:

Բր. Անուն իմ Բրուտոս է, և ինձ հայր և մայր Ճանաչեմ զնովմ: Մի բանադասեր զիս հայր ունել ինձ զնախնին մեր Բրուտոս՝ որ արեամբ որդւոցն՝ Հռովմայ ազատութիւն պարզեաց. գուցէ ուսաց և ես ՚ի նմանէ արեամբ ծնողիս, արեամբ իմ որդւոց, և իմով իսկ արեամբ՝ ողողել ընթել վարել ՚ի Հռովմայ զինքնակալ միաշեծան տէրութիւն:

ԿԵՍ. Եւ զի՞նչ. միթէ ծնամ Կեսար յաղաշել զքեզ. ուսաց և ես ՚ի Բրուտոսէ ելանել ըստ մարդկութիւն. ՚ի բաց կաց յինէն, զաւակ ապստամբ. ոչ փոյթ ինչ առնեմ, ոչ ևս Ճանաչեմ զքեզ. ազատ եմ յիշխանութեանս, ոչ ևս լսեմ անիրաւ անարժան գթութեանս. վաստակեալ եմ ՚ի ներելոյ անարժանից. այսուհետե սպառսպուռ թափեցից զմթերս բարկութեան:

Ահ Սիջա, Սիջա, առից զքեզ ինձ օրինակ. այլ սրտմութեան նորա միայն եղէց նմանող. սարսեսչեք այսուհետե՝ ի մոնչել բարկութեան

իմց և վրէժինդրութեան: Երթ գնա ՚ի բաց, այ անագորոյն. Երթ առ ընկերս քո. ամենեքեան առ հասարակ շարժեցին զարտմութիւն իմ. առ հասարակ կորիցեն. զօրութիւն Կեսարու յայտնի է Հռովմայ. արդ աեսցէ ընդ հուպ և զյանդրդնութիւն նորա. այսուհետե ես յանգթութիւն փոխեցաց: Եւ այսր ամենայնի պատճառք դու, դու միայն և ոչ այլ ոք գլուխ չարեացապարտ. (Ելուե):

Բր. Օ՞ն և մեք Երթիցուք զհետ նորա. ահ, մի ՚ի սպառ բորբոքեցի բարկութիւն նորա. ո տայր ինձ փրկել միանդամայն զնովմ և զկեսար:

Իլ շարունակուի:

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես Երես 95)

388 Ինչո՞ւ համար ջուրն կը մարէ զկրակը: — Նախ, որովհետե կիզանուտներուն չորս բոլորը պատելով կ'արգելու օդը իրենց հասնելու: — Բ. Ջուրն չոգի փոխուելով այրող կիզանուտներուն տաքութիւնը իրեն կը քաշէ:

389 Բայց ինչո՞ւ համար եթէ աղէկ վառած կրակի մը վրայ ջրոյ պղոտի քանակութիւն մը թափուկ՝ ալ աւելի կը բարնկցընէ: — Որովհետե քիչ ջուրն չուտով շոգի կը դառնայ, և այս շոգւոյն լուծուելն ձեւացած կազերն կ'աւելցընեն բոցը:

390 Ինչո՞ւ համար վառած ճրագ մը եթէ լեցուն եռացած ջրով կաթսայի մը վըրայ գրուի: մէկէն կը մարի: — Որովհետե ջրին շոգին կը մարէ զկրակը:

391 Ո՞ր կազերն են՝ որ կը գոյանան ջրէն՝ այս պարագայիս մէջ: — Կրկնածդիալ ջրածին կազն և ածդուկի րրուաշ կազն. երկուքն ալ աղէկ այրող կազեր:

392 Ուրեմն ջուրն ունի այս կազերը: — Ոչ. այլ ասոնք կը ձեանան երբ ջրային շոգին կրակին վրայ համնի: Հրդեհի մը շատ ածղուկ կ'ըլլայ սաստիկ տաքցած և պատրաստ թթուածընին հետ զուգակցելու: Ջրային շոգին միացեալ է ՚ի թթուածընէ և ՚ի ջրածընէ. ասոր համար ածղուկին մէկ մասն կը զուգակցի այս շոգւոյն թթուածընին հետ, և կը ձեանայ ածղուկի թթուածին մը՝ որ կ'այրէ. թթուածինն ալ կը գտնէ ազատ ածղուկ և կը պատճառէ ջրածին կրկնածդիալ, ուսկից կը ծագի մեծաւ մասամբ կիզանուտներու բոցն:

393 Իսկ եթէ շոգին շատ ըլլայ և ամեն կողմէն պատէ կրակը, ինչ կը հետեւի: — Նախ, ջրային շոգին կ'արգելու օդուն թը-

թուածինը՝ կրակին վրայ հասնելու, որով կրակն վայրկենական պաղութիւն մը կ'ունենայ: — Բ. Ածղուկն այսպէս պաղելով ոյժ չունենար ջրային շոգին լուծելու, որով կրակն ալ կը մարի:

394 Ինչու համար երբ գետնածուղն շատ մանր և փոշոտ ըլլայ՝ վրան ջուր կը սրսկեն: — Որովհետեւ քիչ մը ջուրն՝ ածղուկին փոշոտ կոյտը աւելի խիտ կ'ընէ, և ջրին կազերն ալ կ'օգնեն անոր կատարելապէս այրելու:

395 Բայց ջրոյ պղտի մասն ալ կրակին տաքութիւնը չի նուազեցըներ: — Այս. կաթիլ մը ջուր ալ եթէ վառած ածուղի վրայ նետուի՛ հոն սև բիծ մը կը պատճառէ, որ կը նշանակէ թէ ածուղին այն մասն պաղած է. բայց կրակին մնացորդն շուտ մը նորէն կ'ածեցընէ տաքութիւնը. այն քիչ մը ջուրն ալ կը շոգիանայ, և ածղուկն կը լուծէ զայն. և ասով վերը ըսածնիս կը պատահի:

396 Ի՞նչ զգուշութիւն պէտք է ընել հրդեհ մը մարելու համար: — Պէտք է ճարել ջրոյ կամ շոգւոյ մեծ քանակութիւն մը, որ կարելի ըլլայ ածղուկը պաղեցընել, և հրդեհը օդուն հետ հաղորդուելն զատել. որով կրակը կը մարի:

397 Ջուրէն աւելի աղէկ ի՞նչ նիւթ կայ կրակը մարելու: — Ծծրմբի ծաղիկն և փոշին:

398 Ինչու համար Ծծրմբի ծաղիկն աւելի ապահով կերպով կը մարէ զկրակը քան թէ ջուրն: — Որովհետեւ, նախ, ծծումբն մեծ նմանութիւն ունի թթուածընին՝ որ զայն կը վերածէ ի Ծծրմբոտ րըրուտ. անով կրակն զրկուելով թթուածընէն՝ սնունդ չի գտներ և կը մարի. — Բ. Ծծրմբոտ թթուածն կը գոյացընէ ճերմակ և խիտ շոգի մը, որ խղդուկ մթնոլորտով մը կը պատէ զկրակը:

(Բայց այս կերպս միայն ծխչան մը կամ պղտի հրդեհ մը մարելու համար է:)

399 Ինչու համար փշրուած չոր խոտն և յարդն՝ ածուղին կրակը կը մարեն: — Որովհետեւ այս մարմիններն կ'արգելուն օդուն թթուածինը կրակին վրայ հասնելու, ան ալ սնունդ չի գտնելով կը մարի:

400 Փայտն կը ընայ այրիլ առանց անմիջական հաղորդութիւն ունենալու կրակին: — Այս. եթէ կրակին մօտ փայտի կտոր մը դրուի, և ատեն մը թողուի, կը սկըսի վառիլ առանց կրակին դաշելու ալ:

401 Ի՞նչպէս կ'այրի առանց կրակին դաշելու: — Որովհետեւ կրակին տաքութիւնն կ'արձեկէ կրկնածղեալ ջրածինը, որ կը բոլընկի վառող ածուղներուն հետ շօշափուելով:

402 Ինչու համար այրող տան մը մօտ եղած չէնք մը կ'այրի առանց կրակին գըպչելու: — Որովհետեւ այրող կոյտին տաքութիւնն կ'արձեկէ կրկնածղեալ ջրածին այն մօտիկ չէնքին փայտերուն. և այս կազը կը բոլընկի բոցերէն կամ այրող տան տաքցած պատերէն:

403 Ինչէն կը պատճառի կրակին աւելի կամ պակաս սաստկութիւնն: — Կրակէն առաջեկած թթուածընին քանակութենէն:

404 Ինչու համար մարող կրակին կ'արծարծի եթէ կրակարանն և կասկարային փայտակալներն և ձողերն մաքրուին: — Որովհետեւ օդն՝ որ առաջ ածուղի կտորներուն չէր դաշեր՝ ցրուած մոխրին և փոշոյն պատճառաւ, հիմա համարձակ կրակին վրայ կը հասնի:

405 Ինչու համար մարող կրակ մը կ'արծարծի ցնցուելով: — Որովհետեւ ունելիքը կը կոտրէ միացած ածուղները, և կրակին կենդրոնին մէջ օդու անցք կը բանայ:

406 Ինչու համար մարող կրակի մը վրայ խոտորնակի դրուած ունելիքն՝ կ'արծարծէ զայն: — Նախ, որովհետեւ այս գործիքս կը կենդրոնացընէ ջերմութիւնը, և կը բերէ կիզանուածներուն վրայ: — Բ. Օդն կը մտնէ ասոնց և ունելիքին մէջ տեղ, և պղտի յորձանք մը կը պատճառէ:

407 Կը պատճահի նոյն բանն՝ եթէ ունելիքը կրակին մէջ տեղը դրուի: — Այս. առջի ըսածին պէս կ'ըլլայ այս դիրքով ալ, որովհետեւ պատճառներն և հետեւած արգասիքն նոյն են:

408 Ինչու համար սովորաբար կրակն սենեկաց յատակին հաւասար կամ քիչ մը աւելի ցած կը վառուի: — Որպէս զի վարի օդն տաքնայ:

409 Եթէ կրակն բարձրէն վառեն՝ միթէ վարի օդն չի տաքնար: — Աչ. վասն զի կրակին վար գտուած օդն հազիւ կը զգայ տաքութիւն. ասոր համար ըստ կարելոյն պէտք է յատակին մօտ գտնուի:

410 Ինչու համար երբեմն աղէկ կրակի մը քով ալ նստած ըլլալով ոտքերնուս ցրտութիւն մը կը զգանք: — Որովհետեւ ցուրտ օդն սենեկին մէջ կը մտնէ դրան և պատուհաններուն ճեղքերէն, փոխանակելու կրակին տաքցած օդը՝ որ ծխչանէն դուրս կ'ելլէ. և այն օդոյ հոսանքն՝ որ շարունակ կը ճեանան, մեր ոտքերուն վրայէն անցնելով դանոնք տաքութենէ կը զրկեն:

Բ. — Զանձախաղիր և Ծոխ.

411 Ի՞նչ է ձանձախաղիրին: — Ածուղի և բուսեղէն գոյութեանց չսպառուած կը-

տորուանքն , որ տաքցած օդուն վազու-
կէն քշուելով՝ կը բարձրանան ծխանին
խողովակին մէջ , և անոր բոլորտիքը կը
կպչին :

412 Ինչո՞ւ համար ծխան մաքրողները
ծխաններուն աւելմունքը կը պահեն : —
Որովհետեւ այս նիւթս ամենալաւ պարար-
տութիւն կ'ըլլայ երկրի . վասն զի կանան-
չեղէն բուսցընելու համար հարկաւոր ե-
ղած աղերէն մեծ քանակութեամբ ունի :

413 Ի՞նչ է ծուխն : — Ծուխն կը պատ-
ճառի այն ամենաթեթեւ թռչական գոյու-
թիւններէն՝ որ կիզումէն աղատ կը մնան ,
և օդուն վազուկովը ձանձախարիթին հետ
մէկտեղ կը քաշուին դէպ ՚ի ծխանին խո-
ղովակին ՚ի վեր :

414 Ի՞նչ պատճառաւ ծուխն ծխանին
խողովակին վեր կ'ելլէ : — Կրակէն տաք-
ցած օդն՝ որ աւելի թեթեւ է՝ դուրս կը մը-
զուի աւելի խիտ ցուրտ օդէն , որ կը ճըն-
չուի ծխանին ստորին բերնին վրայ :

415 Ինչո՞ւ համար ծուխն խողովակին
մէջ ելեւու ատեն՝ պտոյտներ կը ճեւացը-
նէ : — Որովհետեւ կրկին ճնշումն կը կրէ .
մէկ մը անով որով կը բարձրանայ , մէկ
մալ ընդդիմութեամբ արտաքին օդոյն՝ որ
ծխանին վերի բերնէն ելլելու ատեն՝ կը
հանդիպի :

416 Ի՞նչ են ծխոյ ծալքերն : — Զան-
ձախարիթներու կտորներ , որ բարձրա-
ցող օդուն արագ ընթացքին մէջ ծուխին
հետ մէկտեղ ծխանէն դուրս կ'ելլեն , ա-
ռանց խտանալու խողովակին երկայնու-
թեան մէջ . բայց քիչ ատենէն այն ոյժը՝
որ զիրենք բարձրացած կը բռնէ՝ կը դա-
դրի , իրենք ալ իրենց ծանրութեամբը գե-
տին կ'իյնան :

417 Ինչո՞ւ համար այս ծխոյ սե ծալ-
քերն երենք չոգեշարժից խողովակներէն
դուրս չեն նետուիր : — Որովհետեւ չոգե-
շարժ մեքենաներէն միայն մէկ տեսակ
ծուխ կ'ելլայ , որ չուտ մը մթնոլորտին մէջ
կը ցնդի :

418 Ինչո՞ւ համար շատ քիչ ծուխ կ'ել-
լայ բանով չոգեշարժներէն : — Որովհե-
տեւ շնչառութիւնն շարունակ և սաստիկ
է , ասոր համար կիզանուտք ամբողջա-
պէս փռան մէջ կ'այրին , և շատ քիչ ծուխ
կ'արձեկեն :

419 Ի՞նչ բան է այն սե դիրտն՝ որ շատ
անգամ չոգեկառով ճամբորդները կը նե-

ղացընէ : — Խտացած ջուրին չոգին է , որ
կ'աղտոտի չոգեկառքին մետաղէ ծխանէն
անցած ատեն :

420 Ինչո՞ւ համար այս չոգին արագ ա-
րագ յորձանքներով պտոյտ կ'առնու : —
Որովհետեւ կառաց արագ ընթացքէն ա-
ռաջ նկած օդուն վազուկներն , մեքենայէն
ելլող ծուխն , և նոյն իսկ չոգւոյն անցքն ,
հովն , և օդուն սովորական շարժմունքն՝
կը մղեն զշողին ամեն կողմէն , և սաս-
տիկ արագութեամբ կը պտուացընեն :

421 Ինչո՞ւ համար երբեմն ծխանք ծու-
խը տուններուն մէջ կը մոցընեն : — Այս
բանս կը պատահի՝ երբ տուններն այնպէս
աղէկ գոցուած ըլլան՝ որ ցուրտ օդ ներս
չմտնէ . այն ատեն կիզման ծառայող օդին
տեղ ուրիշ օդ չգալով՝ մասնական դատար-
կութիւն մը կը պատճառի , ծխանին ներ-
քին բերնին վրայ ճնշումն կը պակսի , և
ծուխն չկարենալով վեր ելլել սենեկաց
մէջ կը լցուի :

422 Ինչո՞ւ համար եթէ տուններն աղէկ
խցած ըլլան՝ ծուխն սենեկաց մէջ կ'իջ-
նայ : — Նախ , որովհետեւ կը պակսի օդու-
վազուկն՝ որ զայն պիտի վեր վերցընէր : —
Բ . Արագին օդն որ կիզման ծառայող
օդուն տեղը պիտի բռնէր՝ ուրիշ անցք
չգտնալով սենեկաց մէջ մտնելու , ծխանէն
վար կ'իջնայ , և վար կը մղէ անոր խողո-
վակին մէջը գտնուած բոլոր ծուխը :

423 Ի՞նչ պէտք է ընել այն ատեն : —
Պէտք է պատուհան կամ գուռ բանալ :

424 Ի՞նչ են այն թիթեղէ անուակներն՝
որ գրեթէ ամեն սրճանոցի և խոհակերոցի
գրանց վրայ հաստատուած են , և միշտ կը
դառնան՝ երբ գռներն և պատուհաններն
գոցուած են : — Ոգաբեր գործիներ են .
անուոյն ճառագայթներն այնպիսի կերպով
մը գրուած են՝ որ արտաքին օդն անոնց
միջէն անցնելով՝ կը գարձընէ զանոնք ,
երբ ներքին օդն կը սկըսի հատնիլ :

425 Ինչո՞ւ համար՝ եթէ գուռն կամ
պատուհանն բացուի այս օդաբեր գործի-
ներն ալ չեն գառնար : — Որովհետեւ այն
ատեն օդն աւելի հանդիսաւ անցք մը կը
գտնէ ներս մտնելու , և հարկ չըլլար օդա-
բերին անուոց ճառագայթներուն միջէն
անցնիլ :

Կը շարումակոչ :